ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՇԱՀԵՆ ՇԱՆԹԻ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՅԼԱԽՈՀՈՒԹՅՈՒՆԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 1960-1980-ԱԿԱՆ ԹԹ. ԿԵՍԵՐԻՆ

Է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն

ՍԵՂՄԱԳԻՐ

Երևան – 2025

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
ՄԻՆԱՍՅԱՆ ԷԴԻԿ ԳԱՐԵԳԻՆԻ

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՀԵՆՐԻԿ ՄՈՒՇԵՂԻ

պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՄՀԵՐ ԱԼԵՔՍԱՆԴՐԻ

Առաջատար կազմակերպություն՝ Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Ատենախոսության հրապարակային պաշտպանությունը կայանալու է 2025 թվականի հունիսի 24-ին, ժամը 14:00-ին ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում գործող ՀՀ ԲԿԳԿ-ի Հայոց պատմության 004 մասնագիտական խորհրդի նիստում (հասցե՝ 0019, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2025 թվականի մայիսի 23-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական
քարտուղար, պ.գ.թ., դոցենտ Մուրադյան Հ.Ղ.

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության թեմայի արդիականությունը և գործնական նշանակությունը: Թեմայի արդիականությունն ուղիղ համեմատական է նորանկախ Հայաստանի Հանրապետության պատմության և ապագայի արժեքորմատիվային հենասյուների ձևավորմանը: Խորհրդային ժամանակաշրջանում անկախության, ազգային հարցերի, մարդու իրավունքների պաշտպանության համար պայքարի և այդ պայքարի նվիրյալների արժևորումը, մեր կարծիքով, հիմնական գաղափարական սյուներից կարող է դառնալ պետության կյանքում, որը հնարավորություն կտա հայ ժողովրդի սերունդների գիտակցության մեջ ամրապնդել անկախության և ազատության բարձրագույն արժեքները: Ըստ այսմ՝ սույն աշխատանքը գործնական նշանակություն կարող է ունենալ հանրակրթական և բուհական ծրագրերում թեմայի ավելի խորը և հանգամանալից ներկայացման համար:

Ներկայումս, երբ Հայաստանի Հանրապետությունը գտնվում է ծանր ու բարդ ներքին և արտաքին քաղաքական պայմաններում, իսկ հայ հասարակությունը՝ պետության նկատմամբ անվստահության, հուսահատության մեջ, է՛լ ավելի է ընդգծվում և հստակեցվում թեմայի գործնական նշանակությունը: Խորհրդային բռնապետական կայսրությունում ծավալված այլախոհական պայքարը, որը շատ դեպքերում անհույս է թվացել, վերջնարդյունքում պսակվել է հաջողությամբ՝ Հայաստանի անկախության վերականգմամբ: Այս ամենի մասին լիարժեքորեն հասարակության լայն շերտերի իմացությունը՝ կվերականգնի վստահությունը սեփական ուժերի նկատմամբ, հավատը՝ անկախ պետականության և ազատ կյանքի նկատմամբ: Անկախության և այլ կարևոր հարցերի համար պայքարի դժվարին տարիների հաղթահարումը, գալիս է ապացուցելու, որ յուրաքանչյուր ծանր և անգամ անելանելի իրավիճակից միշտ գտնվում են ելքեր, երբ դրսևորվում է համառություն, վճռականություն և կամք:

Ուսումնասիրության առարկան, նպատակն ու խնդիրները: «Խրուշչովյան հալոցքի» քաղաքականության և Արևմուտքի ու Խորհրդային Միության միջև ընթացող Սառը պատերազմի արդյունքում արմատավորված այլախոհությունը մեծապես նպաստեց խորհրդային կարգերի գաղափարական հիմքերի սասանմանը, ազդեցություն ունեցավ խորհրդային հասարակական-քաղաքական կյանքի վրա՝ խոր հետք թողնելով ԽՍՀՄ ժողովուրդների գիտակցության մեջ: Խորհրդային մարդու մոտ ավելի ամրապնդվեց խորհրդային պետության ու նրա կոմունիստական գաղափարախոսության նկատմամբ հավատի բացակայությունը, ինչին էլ աստիճանաբար նպաստեց խորհրդային կայսրության փլուզմանը:

Ուսումնասիրության առարկան 1960-1980-ական թթ. Խորհրդային Հայաստանում առաջացած քաղաքական այլախոհությունն է, որը լինելով ավելի շատ համամիութենական մտային ընթացք, ուներ շեշտված ազգային առանձնահատկություններ: Այն ավելի շատ մեկնաբանվում է իբրև արևմտյան, ռուսական, ուկրաինական, մերձբալթյան գիտական ու քարոզչական հանրությունում տարածված երևույթ, քան հայկական միջավայրում:

ԽՍՀՄ փլուզումից և Հայաստանի անկախության վերականգնումից հետո, պետության առաջնային խնդիրներից մեկը պետք է լիներ խորհրդային տարիների այլախոհական շարժումների մասին բազմակողմանի հետազոտությունների պատվիրումը, ինչը կնպաստեր գաղափարախոսական առավել ամուր հիմքերի վրա դնելու նորանկախ պետության

կառուցումը։ Անկախության համար մղված պայքարի և այլախոհական դրսևորումների գիտական լուսաբանումն ու մատուցումն անկասկած դրականորեն կազդեին անկախության և նորացող աշխարհի պայմաններում խմորվող հայ հասարակական-քաղաքական մտքի վրա, ինչպես նաև առանցքային նշանակություն կունենային սերունդների դաստիարակման և կրթման արժեքային համակարգի համար։ Ի թիվս այլոց, սույն ատենախոսության հիմնական նպատակն է հնարավորինս լրացնել այդ բացը՝ գիտական խոսույթ ծավալելով թեմայի շուրջ։

Ելնելով ատենախոսության բուն առարկայի և նպատակների թելադրանքից՝ այստեղ փորձ է արվում գիտական լուծում տալ հետևյալ հիմնական խնդիրներին.

- Ուսումնասիրել խնդրո առարկա ժամանակահատվածում Խորհրդային Միության արտաքին ու ներքին քաղաքական և գաղափարական գործընթացները, որոնք ծնեցին ԽՍՀՄ այլախոհական շարժումները,
- հանգամանորեն ուսումնասիրել և քննարկել Խորհրդային Հայաստանում քաղաքական այլախոհության առաջացման նախադրյալները, տիպական առանձնահատկությունները և գաղափարական ուղղությունները,
- բազմակողմանի հետազոտել Խորհրդային Հայաստանում քաղաքական այլախոհության բոլոր դրսևորումները և դասդասել դրանք,
- բացահայտել, համակարգել և շարադրել Խորհրդային Հայաստանում հիմնադրված այլախոհական կազմակերպությունների և անհատների ծավալած գործունեությունը, գաղափարական առաջնահերթությունները և նպատակները,
- որոշարկել պետականության վերականգնման գործում Խորհրդային Հայաստանի այլախոհական շարժման ազդեցության և դերակատարման աստիճանը,
- նպաստել մոտ անցյալի պատմական կարևորագույն իրողության՝ անկախության վերականգման պայքարի ժամանակաշրջանի հանրայնացմանը։

Ատենախոսության ժամանակագրական շրջանակը։ Ատենախոսությունը ժամանակագրական առումով սկսվում է Ն. Խրուշչովի կառավարման ժամանակափուլից, երբ Խորհրդային Միությունում սկսեցին տեղի ունենալ համակարգային որոշ վերափոխումներ և վերադասավորումներ, ինչը պատմության մեջ հայտնի է «Խրուշչովյան հալոցք» անունով։ Քաղաքական այս ուղղությունը շրջադարձային ազդեցություն ունեցավ խորհրդային հասարակական-քաղաքական կյանքի վրա։ Հետստալինյան ժամանակաշրջանում տեղի ունեցող ներքաղաքական վերադասավորումները և զուգահեռաբար ուժգնացող Սառը պատերազմը, հիմնական նշանակությունն ունեցան 1960-ական թվականներից Խորհրդային Միությունում առաջացած այլախոհական շարժումների համար։ Ատենախոսության շրջանակում հետազոտված ժամանակահատվածը ներկայացնում է Խորհրդային Հայաստանում ծավալված քաղաքական այլախոհության պատմությունը, որը տեղի է ունեցել 1960-1980-ական թվականներին (մինչև Գորբաչովյան «Վերակառուցման» քաղաքականությունը)։

Ատենախոսության մեթոդաբանական հիմքերը։ Հետազոտությունը կատարվել է պատմական, պատմահամեմատական, պատմավերլուծական, նաև հոգեբանական վերլուծությունների մեթոդաբանություններով։ Աշխատանքն իրականացվել է գիտական փաստերի և փաստարկումների համեմատությամբ ու համադրմամբ, աշխատությունների, հոդվածների, հուշագրությունների, անձնական և պետական արխիվների, գրավոր և

ձայնագրված հարցազրույցների վերլուծությամբ, որոնց հիման վրա կատարվել են անձնական դիտարկումներ ու եզրակացություններ։

Ատենախոսության գիտական նորույթը։ Անկախության հռչակումից հետո Խորհրդային Հայաստանի այլախոհական դրսևորումների մասին արժեքավոր տեղեկություններ են տարածվել հայտնի այլախոհների հուշագրությունների, հարցազրույցների, մի շարք փաստական և արխիվային որոշ տվյալների հրապարակումների արդյունքում։

Սակայն, չնայած հրապարակի վրա առկա նյութերին, այս թեմայով ամբողջական գիտական համակողմանի ուսումնասիրություն չի ստեղծվել։ Սույն ատենախոսության առաջնային գիտական նորույթն այն է, որ առաջին անգամ արտասահմանյան և հայկական աղբյուրների, պետական և անձական արխիվային ֆոնդերի հիման վրա ամփոփված է Խորհրդային Հայաստանում քաղաքական այլախոհության առաջացման շրջանը՝ բոլոր նախադրյալների, գործոնների և առանձնահատկությունների հաշվառմամբ, դրանց մատրիցային կապերի հանգույցներով։ Սույն աշխատության մեջ համակարգվել են հայկական այլախոհության երեք հիմնական գաղափարական ուղղությունները, որոնք արտացոլված էին այլախոհական պայքարի ամբողջ ժամանակաշրջանում։

Գիտական նորույթ են նաև՝ ա) Խորհրդային Հայաստանում հիմնադրված ընդհատակյա կազմակերպությունների պատմության համակարգված վերհանումը և մատուցումը, բ) հայկական այլախոհական ընդհատակյա կազմակերպությունների հիմնադրման, նրանց ծավալած գործունեության, գաղափարական առաջնահերթությունների, պայքարի միջոցների և դատավարությունների դասդասումը, գ) քաղաքական այլախոհության անհատական դրսևորումների ուսումնասիրումը և հանրայնացումը։

Ատենախոսության աղբյուրագիտական հիմքը և հիմնահարցի ուսումնասիրվածությունը։ Ատենախոսության աղբյուրագիտական հենքը բազմաբնույթ է։ Աշխատանքի շարադրման հիմքում ընկած են պետական, մասնավոր, անձնական արխիվների, գիտական գրականության, ԽՍՀՄ և մասնավորապես ՀԽՍՀ այլախոհական ընդհատակյա տպագիր պարբերականների, այլախոհական շարժման մասնակիցների կողմից տպագրված և անտիպ հուշագրությունների, հարցազրույցների, համացանցային տեղեկատվության ուսումնասիրություններ։

Հետազոտության աղբյուրագիտական հենքում առաջնային և կարևոր տեղ են ունեցել արխիվային նյութերի ուսումնասիրությունները։ Բազմակողմանի ուսումնասիրման են ենթարկվել պետական, մասնավոր և այլախոհական շարժումների մասնակիցների անձնական արխիվներում պահպանված նյութերն ու փաստաթղթերը։ Կարևորագույն նշանակություն ունեն *Հայաստանի ազգային արխիվում (այսուհետ՝ ՀԱԱ)* գտնվող նյութերը[1], որոնց ծանրակշիռ մասը փոխանցվել են հայտնի այլախոհ, իրավապաշտպան Վարդան Հարությունյանի ջանքերով։ Ընդգծելի է, որ Հայաստանի Հանրապետության Ազգային անվտանգության ծառայությունն (այսուհետ՝ ԱԱԾ) առ այսօր հնարավորություն չի ստեղծում ուսումնասիրել ՊԱԿ/ԱԱԾ արխիվներում պահպանված նյութերը։ Հույս ունենք, որ

[1] **ՀԱԱ**, ֆ. 1, ց. 44, գ. 73, ֆ.1, ց. 126, գ. 20, ֆ. 113, ց. 96, գ. 88, ֆ. 1191, ց. 20, գ. 2, ֆ. 1191, ց. 20, գ. 3, ֆ. 1191, ց. 20, գ. 4, ֆ. 1191, ց. 20, գ. 5, ֆ. 1191, ց. 20, գ. 6, ֆ. 1191, ց. 20, գ. 7, ֆ. 1191, ց. 20, գ. 8, ֆ. 1191, ց. 20, գ. 9, ֆ. 1191, ց. 20, գ. 10, ֆ. 1191, ց. 20, գ. 11, ֆ. 1191, ց. 20, գ. 12, ֆ. 1191, ց. 20, գ. 13, ֆ. 1191, ց. 20, գ. 14, ֆ. 1191, ց. 20, գ. 15, ֆ. 1191, ց. 20, գ. 16, ֆ. 1191, ց. 20, գ. 17,
ֆ. 1191, ց. 20, գ. 18, ֆ. 1191, ց. 20, գ. 19, ֆ. 1191, ց. 20, գ. 20, ֆ. 1191, ց. 20, գ. 21, ֆ. 1191, ց. 20, գ. 22, ֆ. 1191, ց. 20, գ. 23, ֆ. 1191, ց. 20, գ. 24, ֆ. 1191, ց. 20, գ. 25, ֆ. 1191, ց. 20, գ. 26, ֆ. 1191, ց. 20, գ. 27, ֆ. 1191, ց. 20, գ. 28։

գալու է ժամանակ, երբ Խորհրդային Հայաստանում այլախոհական շարժումների վերաբերյալ ԱԱԾ արխիվներում պահվող տեղեկություններն առնվազն գիտական աշխատանք իրականացնողների համար հասանելի կդառնան, ինչպիսի նախադեպեր կան հետխորհրդային մի շարք հանրապետություններում: Այլախոհների անձնական արխիվներում պահպանված են արժեքավոր տեղեկություններ, որոնք վերաբերում են 1960-1980-ական թթ. տեղի ունեցած իրադարձություններին: Պահպանված են թռուցիկներ, հոդվածներ, կազմակերպությունների ծրագրեր, կանոնադրություններ: Գրականության այս տիպին են պատկանում նրանց բանտային տարիներին վերաբերող նյութերը՝ դատավճիռները, բանտային նամակները, գրությունները, հարցաքննությունները և այլն: Այս համատեքստում առանձնակի կարևորություն ունեն հայտնի այլախոհներ *Շահեն Հարությունյանի*[2], *Մարզպետ Հարությունյանի*[3], *Պարույր Հայրիկյանի*[4], *Հայկազ Խաչատրյանի*[5], *Վարդան Հարությունյանի*[6] *և Հովիկ Վասիլյանի*[7] անձնական արխիվները:

Ատենախոսության աղբյուրագիտական մյուս կարևոր տիպերն այլախոհական շարժման մասնակիցների կողմից տպագրված և անտիպ հուշագրություններն են: Աշխատանքի համար կարևոր նշանակություն է ունեցել թեմայի վերաբերյալ գիտական գրականությունը: Ուսումնասիրման ընթացքում օգտվել ենք տարբեր պատմաբանների, ուսումնասիրողների աշխատություններից, ինչպես նաև կարևորվել են մասնագիտական այլ ոլորտների աշխատությունները (իրավագիտություն, քաղաքագիտություն), որոնք, թեկուզ չնչին կերպով առնչվել են ատենախոսության բովանդակությանը: Իրականացվել է հայերեն և օտարալեզու գրականության, գիտական հոդվածների, ժողովածուների ուսումնասիրություն:

Թեմայի լիարժեք ուսումնասիրման համար կարևոր նշանակություն ունեն այլախոհոհների կողմից տպագրված կամ անձնական արխիվներում պահվող անտիպ հուշագրությունները (այս վերջինները երբևէ անհրաժեշտ է ի մի բերել, դասակարգել և պատրաստել տպագրության): Դրանք արժեքավոր սկզբնաղբյուրներ են, որտեղ ներկայացված են այլախոհական պայքարի վերաբերյալ մանրամասնություններ, որոնք հուշագրված են մասնակիցների (երբեմն՝ ընտանիքի անդամների) կողմից: Տպագրված հուշագրությունները կարևոր են թե՛ հայ և թե՛ օտար հանրույթներին լրացուցիչ տեղեկություններ փոխանցելու համատեքստում: Սույն աշխատանքը մասամբ լրացնում է այս տիպի նախնական մատենագրություն կազմելը:

Ատենախոսության համար աղբյուրագիտական մեծ արժեք ունեն ԽՍՀՄ և մասնավորապես ՀԽՍՀ այլախոհական ընդհատակյա տպագիր պարբերականները: Տեղեկատվական մեծ կարևորություն ունի 1968-1983 թթ. լույս տեսած *«Ընթացիկ իրադարձությունների ժամանակագրությունը»* նյութերի շարքը[8], որտեղ մանրամասնորեն

---

[2] Շահեն Հարությունյան անձնական արխիվ, անտիպ հուշագրություն, ձեռագրեր, փաստաթղթեր:

[3] Մարզպետ Հարությունյանի անձնական արխիվ, փաստաթղթեր:

[4] Պարույր Հայրիկյանի անձնական արխիվ, անտիպ հուշագրություն, ձեռագրեր, փաստաթղթեր:

[5] Հայկազ Խաչատրյանի անձնական արխիվ, անտիպ հուշագրություն:

[6] Վարդան Հարությունյանի անձնական արխիվ, փաստաթղթեր:

[7] Հովիկ Վասիլյանի անձնական արխիվ, հարցազրույցներ:

[8] **A Chronicle of Current Events**, Arrests Raphael Oganyan and Sirvad Avagyan, Eduard Arutunyan, Edmond Avetyan, Raphael Papayan and Georgy Khomizuri, 31 December 1982, The Trial of Eduard Arutyunyan, No. 56, 30 April 1980. A Chronicle of Current Events, The Trial of Navasard an and Arshakyan, No 64, 30 June 1982,

տպագրվում էր Խորհրդային Միության տարբեր հանրապետություններում ընթացող այլախոհական շարժումների, նրանց մասնակիցների և դատավարությունների մասին տեղեկություններ: Այդ նյութերին հատկապես ուշադրություն էին դարձնում արևմտյան մամուլն ու ռադիոկայանները: ՀԽՍՀ-ում հայտնի էին «Փարոս»[9], «Երկունք»[10], «Հանուն Հայրենիքի»[11] ընդհատակյա պարբերականները, որոնց միայն հրապարակումը և տարածումը նշանակում էր դատապարտում ՀԽՍՀ քրեական օրենսգրքի 65-րդ հոդվածով:

Ատենախոսության համար սկզբնաղբյուրի դեր են կատարել նաև հարցազրույցները: Դեռևս հնարավորություն կա շփվելու և տեղեկություններ ստանալու անձամբ այլախոհական շարժման մասնակիցներից, թեև նրանց թիվը տարեցտարի նվազում է: Ուսումնասիրման են ենթարկվել հնարավոր բոլոր հարցրազրույցները: Ատենախոսության հեղինակը թեմայի շրջանակներում իրականացրել է հարցրազրույցներ հայ այլախոհների հետ, որոնք ևս հավաստի սկզբնաղբյուր են՝ համադրությունների պարագայում: Ատենախոսության շրջանակում հարցազրույցներ են իրականացվել *Պարույր Հայրիկյանի*[12], *Ազատ Արշակյանի*[13], *Վարդան Հարությունյանի*[14], *Սուրեն Մելիքյանի*[15], *Յուրիկ Բուդաղյանի*[16], *Արսեն Ղազարյանի*[17], *Հովհաննես Աղաբաբյանի*[18] հետ: Առանձին ուսումնասիրման են ենթարկվել *Շահեն Հարությունյանի, Հայկազ Խաչատրյանի, Աշոտ Նավասարդյանի, Հովիկ Վասիլյանի, Շիրակ Գյունաշյանի և Ռազմիկ Մարկոսյանի* հետ տարբեր տարիներին իրականացված տպագիր և տեսաձայնագրված հարցազրույցները:

Ատենախոսությունը շարադրելիս ուշադրություն է դարձվել նաև *համացանցային ընդհանուր տեղեկատվությանը:* Իրականացվել են համացանցում առկա նյութերի (փաստեր,

---

Explosions in Moscow, January 1977 (44.16), 16 March 1977, The Trial of Airikyan, No 63, 31 December 1981, Repressing Helsinki Groups: Armenia, 1977-8 (48.5), The Trial of Shagen Arutyunyan, 14 March 1978, Robert Nazaryan on trial, Nov-Dec 1978 (51.1), 1 December 1978, The Metro Explosion Trial, March 1979 (52.1), 1 March 1979, The Trial of Ashot Navasardyan, No 34, 31 December 1974, The Trial of Manucharyan, Apikian and Melkonyan, No 62, 14 July 1981, The Trial of Marzpet Arutyunyan, Vartan Arutyunyan, Ishkan Mkrtchyan, Samvel Egiazaryan and Oganes Agababyan, No 62, 14 July 1981, The Trial of Paruir Airikyan, No 34, 31 December 1974, Trials in Armenia, 1973-1974 (34.4), 31 December 1974, Trials in Yerevan, 1969-1970 (16.4), 31 October 1970.

[9] ՀԱԱ, ֆ. 1191, ց. 20, գ. 4, թթ. 16-19:

[10] ՀԱԱ, ֆ. 1191, ց. 20, գ. 7, թթ. 16-17:

[11] ՀԱԱ, ֆ. 1191, ց. 20, գ. 6, թթ. 18-38:

[12] Տեսաձայնագրված հարցրազրույց Պարույր Հայրիկյանի հետ, հեղինակ՝ Շահեն Հարությունյան, Երևան, 23.08.2023:

[13] Տեսաձայնագրված հարցրազրույց Ազատ Արշակյանի հետ, հեղինակ՝ Շահեն Հարությունյան, Երևան, 22.08.2023:

[14] Տեսաձայնագրված հարցրազրույց Վարդան Հարությունյանի հետ, հեղինակ՝ Շահեն Հարությունյան, Երևան, 24.08.2023:

[15] Տեսաձայնագրված հարցրազրույց Սուրեն Մելիքյանի հետ, հեղինակ՝ Շահեն Հարությունյան, Երևան, 14.08.2024:

[16] Տեսաձայնագրված հարցրազրույց Յուրիկ Բուդաղյանի հետ, հեղինակ՝ Շահեն Հարությունյան, Երևան, 19.08.2024:

[17] Տեսաձայնագրված հարցրազրույց Արսեն Ղազարյանի հետ, հեղինակ՝ Շահեն Հարությունյան, Երևան, 12.09.2024:

[18] Տեսաձայնագրված հարցրազրույց Հովհաննես Աղաբաբյանի հետ, հեղինակ՝ Շահեն Հարությունյան, Երևան, 07.09.2024:

հարցազրույցներ, ուսումնասիրություններ, այլևայլ հրապարակումներ) ուսումնասիրություն, վերլուծություն և անհրաժեշտ տեղեկությունների համակարգում և օգտագործում:

Խորհրդային Հայաստանում ծավալված այլախոհական շարժումների ուսումնասիրման համար աղբյուրագիտական արժեքավոր հենք են հայտնի այլախոհ, շուրջ երկու տասնամյակ խորհրդային կալանավայրերում և աքսորավայրերում անցկացրած **Պարույր Հայրիկյանի** փաստագրական, հուշագրական աշխատությունները, մասնավորապես ***«Իմ բանտային յուշերից, 1965-1973»***[19] և ***«Ազատութեան ճանապարհի բանտերում, 1974-1977»***[20] գրքերը: Վերոնշյալ գրքերում, Պ. Հայրիկյանը, մանրամասն անդրադառնում է իր ծավալած այլախոհական գործունեությանը, ներկայացնում Խորհրդային Հայաստանում այլախոհական շարժումների մասին իր տեղեկությունները, պատմում կալանավայրերում և աքսորավայրերում անցկացրած տարիների, հայ և այլազգի այլախոհների փոխհարաբերությունների մասին:

Թեմայի ուսումնասիրման համար առանցքային նշանակություն ունեն, 1970-ական թթ. վերջից այլախոհական ակտիվ գործունեություն ծավալած և շուրջ ութ տարի խորհրդային կալանավայրերում անցկացրած, հայտնի այլախոհ **Վարդան Հարությունյանի** աշխատությունները: ***«Այլախոհությունը Խորհրդային Հայաստանում»*** տեղեկատվական բնույթ կրող գրքում[21], Վ. Հարությունյանը, ներկայացնում է խորհրդային տարիներին Հայաստանում ազգային-հայրենասիրական, հասարակական-քաղաքական գործունեության համար դատապարտված մարդկանց անցած ճանապարհը, նրանց մասին պատմող հուշեր:

Վ. Հարությունյանի մյուս աշխատությունը՝ ***«Քաղբանտարկյալի պատմությունը»***[22], առավելապես կրում է հուշագրական բնույթ, որտեղ հեղինակը մանրամասն պատմում է իր և այլ քաղբանտարկյալների (այդ թվում՝ այլազգի) անցած բանտային ճանապարհի մասին:

Ատենախոսության համար կարևոր սկզբնաղբյուր է ՀԽՍՀ Պետական անվտանգության կոմիտեի (այսուհետ՝ ՊԱԿ) նախկին աշխատակից **Արմենակ Մանուկյանի «Քաղաքական այլախոհությունը Հայաստանում 1950-1988 թթ.»** գիրքը, որտեղ, ներկայացված են Խորհրդային Հայաստանի քաղաքական այլախոհության հիմնական դրևորումները[23]:

Թեմայի ուսումնասիրման համար կարևոր նշանակություն ունեն **Էդիկ Մինասյանի** գիտական հոդվածները, որոնք արժեքավոր տեղեկություններ են փոխանցում Խորհրդային Հայաստանում այլախոհության ձևավորման կարևորագույն խթան դարձած 1921 թ. մարտի 16-ի Մոսկվայի և նույն թվականի հոկտեմբերի 13-ի Կարսի պայմանագրերի մասին[24],

---

[19] **Հայրիկեան Պ.,** Իմ բանտային յուշերից, Գիրք Ա, 1965-1973, Երևան, ԱԻՄ հրատ., 2016:

[20] **Հայրիկեան Պ.,** Ազատութեան ճանապարհի բանտերում, Գիրք Բ 1974-1977, Երևան, ԱԻՄ հրատ., 2017:

[21] **Հարությունյան Վ.,** Այլախոհությունը Խորհրդային Հայաստանում, Երևան, Վան Արյան հրատ., 2014:

[22] **Հարությունյան Վ.,** Քաղբանտարկյալի պատմություն, Երևան, Հայկական ուսումնասիրությունների Անի հիմնադրամ հրատ., 2022:

[23] **Մանուկյան Ա.,** Քաղաքական այլախոհությունը Հայաստանում 1950-1988 թթ., Երևան, Ամրոց հրատ., 2005:

[24] **Մինասյան Է.**, 1921 թ. մարտի 16-ի Մոսկվայի և հոկտեմբերի 13-ի Կարսի պայմանագրերի հետևանքները, Հայաստանը և տարածաշրջանը. դասեր, արժևորումներ, հեռանկարներ, Երևան, Լուսակն հրատ., 2022:

ինչպես նաև այլախոհության հետագա ընթացքի, մասնավորապես 1980-ական թթ. վերջից ընթացող ներքաղաքական զարգացումների մասին[25]:

Թեմայի ուսումնասիրման ընթացքում օգտվել ենք **Ամատունի Վիրաբյանի «Հայաստանը Ստալինից մինչև Խրուշչով»** աշխատությունից[26], որտեղ կարևոր տեղեկություններ են ամփոփված խորհրդա-թուրքական հարաբերությունների, հայկական տարածքների խնդիրների և Խորհրդային Միության հասարակական-քաղաքական կյանքի մասին:

Ուսումնասիրված թեմայի համար արժեքավոր նշանակություն ունի **Սթիվեն Բիթների** աշխատությունը[27], որտեղ մանրամասն ներկայացված են հետստալինյան ժամանակաշրջանը և «Խրուշչովյան հալոցքին» բնորոշ ներքաղաքական, հասարակական փոփոխությունները և վերադասավորումները:

Այլախոհության և «Խրուշչովյան հալոցքի» ժամանակաշրջանի մասին արժեքավոր տեղեկություններ են ամփոփված **Ռոբերտ Հորնսբիի** աշխատության մեջ[28]: Հեղինակն օգտվելով Խորհրդային Միության դատախազության, Կոմունիստական կուսակցության և այլ արխիվներում պահպանված աղբյուրներից, ներկայացնում է ստալինյան ժամանակաշրջանին հաջորդող գործընթացները, «Խրուշչովյան հալոցքը» և դրան զուգահեռ՝ քաղաքական այլախոհության առաջացումը: Կարևոր ընդգծումներ են կատարված ՊԱԿ-ի գործելաոճին, երբ խորհրդային հատուկ ծառայություններն ավելի խորն էին ներթափանցում հասարակության մեջ, ինչպես նաև անդրադարձեր են կատարվում հոգեբուժական հալածանքների կիրառմանը և խորհրդային հասարակության գաղափարախոսական անկումներին:

Խորհրդային Միությունում այլախոհական շարժումների ուսումնասիրման համատեքստում կարևոր է ընդգծել ԽՍՀՄ ՊԱԿ-ի կողմից 1967 թ. ստեղծված քաղաքական հակահետախուզության 5-րդ վարչության հիմնադիր, վարչությունը ավելի քան 20 տարի ղեկավարած, ռուսական բանակի գեներալ **Ֆիլիպ Բոբկովի** աշխատությունը[29]: Խորհրդային Միությունը հենց այս վարչության միջոցով է պայքարել քաղաքական այլախոհների, այլախոհական կազմակերպությունների և շարժումների դեմ: Ֆ. Բոբկովն իր աշխատությունում արժեքավոր փաստեր է ներկայացնում վարչության գործունեությունից և մանրամասն պատմում, թե ինչպես և ինչ միջոցներով են պայքար մղել այլախոհության դեմ:

Ատենախոսության համար զգալի փաստական տեղեկություններ են առկա խորհրդային հայտնի այլախոհ, իրավապաշտպան **Լյուդմիլա Ալեքսևայի** աշխատության մեջ[30]: Լ. Ալեքսեևայի մենագրությունը համակարգված կերպով ներկայացնում է Խորհրդային Միության տարբեր հանրապետություններում (այդ թվում՝ Խորհրդային Հայաստանում)

---

[25] **Մինասյան Է.**, Անկախ մամուլի սկզբնավորման ժամանակը Հայաստանում և «Անկախություն» թերթը, Տարեգիրք Գ, Երևան, ԵՊՀ հրատ., 2008:

[26] **Վիրաբյան Ա.,** Հայաստանը Ստալինից մինչև Խրուշչով, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2001:

[27] **Bittner S. V.**, The Many Lives of Khrushchev's Thaw: Experience and Memory in Moscow's Arbat, New York, Cornell University Press, 2008.

[28] **Hornsby R.**, Political Protest and Dissent in the Khrushchev Era, Birmingham, Centre for Russian and East European Studies European Research Institute, 2008.

[29] **Бобков Ф.**, Как бороться с агентами влияния, Москва, Алгоритм, 2014.

[30] **Алексеева Л.**, История инакомыслия в СССР : новейший период, Москва, Моск. Хельсинк. Группа, 2012.

ծավալվող այլախոհական շարժումները, այլախոհների նկատմամբ իրականացված հալածանքները և ճնշումները:

Խորհրդային Միությունում այլախոհության և այլախոհների անցած ճանապարհների մասին ավելի խորը և մանրամասն պատկերացում կազմելու և գնահատականներ տալու համար, ուսումնասիրել ենք խորհրդային հայտնի այլախոհ, իրավապաշտպան, ակադեմիկոս **Յուրի Օռլովի** փաստագրական և հուշագրական աշխատությունը, որտեղ հեղինակը ներկայացնում է իր ծավալած այլախոհական, իրավապաշտպանական գործունեությունը, կալանավայրում և աքսորավայրում անցկացրած տարիները[31]: Այս աշխատության մեջ Յ. Օռլովը հետաքրքիր տեղեկություններ է պատմում իր ընկերոջ՝ նույն կալանավայրում գտնվող Մարզպետ Հարությունյանի մասին, որը Հայաստանի անկախության վերականգման համար պայքարի ընդհատակյա կազմակերպություն հիմնադրելու համար դատապարտվել էր երկարատև ազատազրկման և աքսորի:

Ուսումնասիրության փորձաքննությունը և հրապարակումները: Ատենախոսության թեման հաստատվել է ԵՊՀ պատմության ֆակուլտետի գիտական խորհրդի նիստում: Ատենախոսությունը քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել ԵՊՀ պատմության ֆակուլտետի հայոց պատմության ամբիոնի կողմից:

Ատենախոսության հիմնական դրույթները, վերլուծություններն ու եզրահանգումները հրապարակվել են ատենախոսի 9 գիտական հոդվածներում:

Աշխատանքի կառուցվածքը և ծավալը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, 4 գլուխներից՝ համապատասխան ենթագլուխներով, եզրակացություններից, հավելվածից, օգտագործված աղբյուրների և գրականության ցանկից: Աշխատանքի ծավալը 180 էջ է:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածությունում հիմնավորվել է ատենախոսության թեմայի արդիականությունը, ներկայացվել են հետազոտության նպատակը և խնդիրները, օբյեկտը և առարկան, տեսական, մեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը, ստացված գիտական նորույթները, գիտագործնական և կիրառական նշանակությունը և ատենախոսության կառուցվածքը:

Ատենախոսության առաջին գլուխը՝ ***«Քաղաքական այլախոհության սկզբնավորման գաղափարական հիմքերը, նախադրյալները, առանձնահատկությունները և ուղղությունները»,*** բաղկացած է երեք ենթագլխից, որոնք իրենց հերթին, ըստ տրամաբանական հենքի, տրոհված են առանձին բաժինների:

Առաջին գլխի **առաջին ենթագլխում** իրականացված է պատմական ակնարկ Խորհրդային Միության ձևավորման, առաջ քաշած գաղափարական հիմքերի և նրա վարած քաղաքականության վերաբերյալ: Այնուհետև ներկայացված են ԽՍՀՄ-ում տեղի ունեցող ներքաղաքական և արտաքին քաղաքական գործընթացները 20-րդ դարի երկրորդ կեսին, մասնավորապես «Խրուշչովյան հալոցքի» և Սառը պատերազմի ժամանակաշրջանում: Քաղաքական այդ գործընթացները ստեղծեցին նպաստավոր պայմաններ Խորհրդային Միությունում 1960-ական թվականներից այլախոհական մտքի ձևավորման և տարածման

[31] **Orlov Y.,** Dangerous Thoughts: Memoirs of a Russian Life, New York, William Morrow & Co, 1991.

համար։ Այլախոհական շարժումները մեծ հարված հասցրին կոմունիստական գաղափարախոսությանը՝ հիմնովին խարխլելով կայսերական պետության գաղափարական հիմքերը։ Այլախոհական պայքարը, ի թիվս այլ տարածքների, ուժգին կերպով դրսևորվել է ԽՍՀՄ կազմի մեջ մտնող Ուկրաինայում, Հայաստանում, Վրաստանում և Մերձբալթյան հանրապետություններում՝ Լատվիայում, Լիտվայում, Էստոնիայում։ Հարկ է նշել, որ յուրաքանչյուր տարածաշրջանում ձևավորված այլախոհական շարժումներն ունեին իրենց տեղային առանձնահատկությունները և նախադրյալները։

Երկրորդ ենթագլխում մանրամասն ներկայացվել են Խորհրդային Հայաստանում ձևավորված այլախոհության առանձնահատկությունները և նախադրյալները։ Խորհրդային Հայաստանում այլախոհության ակունքների և գաղափարաբանության ձևավորման հիմքերը գտնելու համար քննարկման կարևորագույն առարկա է դարձել 1921 թ.մարտի 16-ին Մոսկվայում կնքված ռուս-թուրքական «Բարեկամության և եղբայրության մասին» պայմանագիրը, որը ուղղված էր Հայաստանի և հայ ժողովրդի դեմ, ինչպես նաև հայկական տարածքների դեմ, որոնց մեծ մասը՝ զոհ գնալով ռուս-թուրքական հարաբերություններին, բռնակցվեցին այլ պետություններին։ Ուսումնասիրվել է նաև վերոնշյալ պայմանագրից բխող և դրանից դուրս գործող խորհրդա-թուրքական հարաբերությունները, որոնք ուղիղ ազդեցություն են ունեցել հայ հասարակության վրա։

Մյուս կողմից քննարկվել է «Խրուշչովյան հալոցքի» ժամանակաշրջանին բնորոշ քաղաքական գործընթացները, որոնք նույնպես իրենց ազդեցությունն են թողել Խորհրդային Հայաստանում այլախոհության ձևավորման և տարածման վրա։

Երրորդ ենթագլխում մանրամասն ներկայացված են Խորհրդային Հայաստանում ձևավորված քաղաքական այլախոհության հիմնական գաղափարախոսական ուղղությունները։ Այլախոհության սկզբնական շրջանում հայկական այլախոհական մտքի և գաղափարախոսության վրա կնիքված էր հայ ժողովրդի պատմական դառը անցյալի հիշողությունները, սակայն, ժամանակի ընթացքում հայկական այլախոհությունը գաղափարապես ամրապնդվեց՝ իր առջև դնելով նոր սկզբունքներ և նպատակներ։ Ուսումնասիրման արդյունքում հստակեցվում է, որ 1960-1980-ական թվականներին Խորհրդային Հայաստանում քաղաքական այլախոհության գաղափարական հիմքում, հիմնականում, ընկած էին հողային պահանջատիրությունը, հայոց լեզվի պաշտպանությունը, 1915 թվականին Օսմանյան կայսրության կողմից իրականացված ցեղասպանության մասին բարձրաձայնումը, Հայաստանի անկախության վերականգման համար պայքարը, մարդու իրավունքների պաշտպանությունը։ Այս հարցերի շուրջ ձևավորվեց հայկական քաղաքական այլախոհությունը, որը, ունենալով գաղափարական հասունացման տարբեր մակարդակներ, շարունակվեց մինչև ԽՍՀՄ փլուզումը։ Վերոնշյալ հարցերի շուրջ այլախոհական դրսևորումները թե՛ անհատապես էին, թե՛ կազմակերպված բնույթով։

Այս ենթագլուխը բաժանված է մի քանի բաժինների, որտեղ ներկայացված են հայկական այլախոհության վերոնշյալ գաղափարական բոլոր ուղղությունների ձևավորման ընթացքը, սկզբունքային և գաղափարական առաջնահերթությունները։

Ատենախոսության երկրորդ գլուխը՝ **«Քաղաքական այլախոհության առաջին դրսևորումները, առաջին կազմակերպությունների առաջացումը և գաղափարական զարգացման դինամիկան Խորհրդային Հայաստանում 1960-ական թթ. սկզբին»,** բաղկացած է չորս ենթագլխից։ Այս գլխում մանրամասն ներկայացված է Խորհրդային Հայաստանում

այլախոհական շարժումների սկզբնավորման շրջանում գործունեություն ծավալած ընդհատկյա կազմակերպությունները։ Հաջորդական ենթագլուխներում ներկայացված են 1960-ական թթ. սկզբերին հիմնադրված և գործունեություն ծավալած այլախոհական ընդհատկյա կազմակերպությունների պատմությունը։

Երկրորդ գլխի **առաջին ենթագլխում** ներկայացված է «Հայ երիտասարդական միություն» ընդհատակյա կազմակերպությունը։ Խորհրդային Հայաստանում քաղաքական այլախոհության գաղափարական հասունացումն ու զարգացումն առաջացրեց ավելի կազմակերպված բնույթի դրսևորումներ։ ՀԽՍՀ-ում այլախոհական կազմակերպված պայքարի առաջին օրինակը 1962 թ. Երևանում ստեղծված «Հայ երիտասարդական միություն» անունը կրող ընդհատակյա կազմակերպությունն էր։ Այս խմբի անդամներն իրենց առաջ նպատակ էին դրել բարձրացնել ազգայնական ոգին հայ ժողովրդի մեջ։ Խումբը կրում էր ժամանակաշրջանին բնորոշ գաղափարական առաջնայնությունները և առավել շատ գործում էր տեղային, հայրենասիրական դաշտում և ընդհանուր առմամբ չուներ հակախորհրդային բնույթ։ Հիմնական շոշափվող թեմաներն էին հայոց լեզվի պահպանումը, Ցեղասպանության հիշատակի օրը նշելը, կորսված հայկական տարածքների վերադարձնելը։

Երկրորդ ենթագլխում ներկայացված է 1966-1967 թթ. Խորհրդային Հայաստանում այլախոհական գործունեություն ծավալած «Հայաստանի վերամիավորման շարժում» ընդհատակյա կազմակերպությունը։ Այս կազմակերպության անվանումն ու գաղափարական առաջնահերթություններն նույնպես արտացոլում են հայ հայրենասիրական շրջանակներում տիրող հասարակական տրամադրությունները։ Կազմակերպության հիմնական խնդիրը եղել է ազգային հարցերի բարձրաձայնումը և խնդիրների լուծմանը նպաստող քայլերի իրականացումը։ Այս համատեքստում, բնական է, որ, ինչպես ազգային հարցերով մտահոգված այլ այլախոհներ, այս կազմակերպությունը, ևս պետք է առաջ քաշեր Ղարաբաղի և Նախիջևանի, Հայոց ցեղասպանությանը վերաբերող հարցեր։

Երրորդ ենթագլխում ներկայացված է 1967-1968 թթ.ընթացքում այլախոհական գործունեություն ծավալած «Հայ հայրենասերների միություն» ընդհատակյա կազմակերպությունը։ Այլախոհական-հայրենասիրական այս կազմակերպության անդամները գտնվում էին ազգային հարցերի բարձրաձայնման, հողային պահանջաատիրության գաղափարական ուղղության շրջանակներում։ Ուսումնասիրելով նրանց ծավալած գործունեությունը և գաղափարական առաջնահերթությունները, տեսնում ենք, որ այլախոհական այս շրջանակը փորձել է հայկական ազգային խնդիրները լուծել՝ անսասան թողնելով խորհրդային իրականությունը։

Չորրորդ ենթագլուխը նվիրված է 1966 թ. հիմնադրված և մինչև ԽՍՀՄ փլուզումը գործած «Ազգային միացյալ կուսակցություն» անունը կրող ընդհատակյա կուսակցությանը։ Այլախոհական առաջին կազմակերպություններն առաջացել էին 1960-ական թվականների սկզբից, սակայն բոլոր այդ կազմակերպությունների մեջ առաջնային նշանակություն էր հատկացված ազգային հարցերի բարձրաձայնմանը։ Հայկական հայրենասիրական միջավայրում առկա էին անկախությանը միտված հասարակական տրամադրություններ, սակայն մինչև Ազգային միացյալ կուսակցության հիմնադրումը այդ դրսևորումները կազմակերպված բնույթ չէին կրում և սահմանափակվում էին բացառապես ելույթներով, քննարկումներով։ ԱՄԿ-ի հիմնադրումով փոխվեցին անկախության պայքարի մոտեցումները՝ դառնալով ավելի կազմակերպված, նպատակային և ավելի վտանգավոր խորհրդային իշխանությունների համար։

ԱՄԿ-ն տարբերվում էր ԽՍՀՄ-ում գործող մնացած բոլոր կազմակերպություններից ոչ միայն հռչակված իր անունով և բնույթով, այլ նաև բովանդակությամբ և կառուցվածքով: Այս կուսակցություն-կազմակերպությունն ուներ արդի աշխարհի պատկերացումներին լիովին համապատասխան հատկանիշները: Ազգային միացյալ կուսակցությունը հիմնադրման պահից հռչակված էր որպես կուսակցություն, որն ուներ ծրագիր, կանոնադրություն, նոր մարդկանց անդամագրման կարգ, հարցաթերթիկ, երդման տեքստ, թերթ, դրոշ, կնիք, անդամավճարի կարգ: Այս ամենը համադրելով ներկայումս գոյություն ունեցող կուսակցությունների կառուցվածքների հետ՝ միանշանակ կփաստենք, որ ԱՄԿ-ն՝ իր տեսակով և բովանդակությամբ, ամբողջովին համապատասխանում էր կուսակցություն տարրին և իմաստին:

Ներկայումս պատմագիտական տեսանկյունից Ազգային միացյալ կուսակցությունը կոչվում է այլախոհական կազմակերպություն, որը մեր կարծիքով ճիշտ չէ, քանզի, պետք է նշել, որ կազմակերպության հիմնադիրները ցանկացել են ստեղծել այնպիսի կառույց, որն իր կարգավիճակով և բովանդակությամբ ձեռնոց կնետեր խորհրդային ամբողջ պետությանը և միակուսակցական համակարգին: Ինչպես նշում է հայտնի ռուս այլախոհ Լյուդմիլա Ալեքսեևան, Հայաստանը միակ երկիրն էր ամբողջ ԽՍՀՄ միակուսակցական համակարգում, որտեղ հիմնադրվել և գործում էր հակախորհրդային, անկախական կուսակցություն՝ ԱՄԿ-ն:

ԱՄԿ-ի մեկ այլ առանձնահատկությունն այն է, որ այս կազմակերպությունը հիմնադրվել է ընդհատակյա պայմաններում, սակայն ժամանակի ընթացքում հանդես է եկել բացահայտ դիրքերից: ԱՄԿ-ականներն անթաքույց պայքարել են Հայաստանի անկախության վերականգնման համար: Հատկանշական է, որ անգամ կալանավորումներից հետո և դատավարությունների ընթացքում, գրեթե բոլոր ԱՄԿ-ականները շարունակել են պահպանել իրենց պայքարի ոգին ու տրամադրվածությունը:

Ուսումնասիրելով ԱՄԿ-ի պատմությունը և համեմատական վերլուծություն իրականացնելով այլախոհական այլ կազմակերպությունների հետ՝ տեսնում ենք, որ ԱՄԿ-ն միակ կազմակերպությունն էր, որը շարունակեց իր գործունեությունը սկսված 1960-ական թվականներից մինչև ԽՍՀՄ փլուզումը: Խորհրդային բռնապետական իշխանությունները, որքան էլ որ փորձում էին կասեցնել Հայաստանի անկախության պայքարը, կազմաքանդել անկախության ջահակիր և առաջամարտիկ դարձած ԱՄԿ-ն, միևնույն է, Ազգային միացյալ կուսակցությունը, չնայած խիստ և դաժան հալածանքների, բանտարկությունների, աքսորների և մահապատիժների, այնուամենայինիվ, շարունակեց իր անկոտրում պայքարը մինչև վերջ՝ ԽՍՀՄ փլուզումը:

Ատենախոսության երրորդ գլուխը՝ «**Այլախոհական շարժումների ուժգնացման երկրորդ շրջանը Խորհրդային Հայաստանում. 1968-1978 թթ. ստեղծված այլախոհական կազմակերպություններն ու նրանց ծավալած գործունեությունը»,** նույնպես բաղկացած է չորս ենթագլխից, որտեղ հանգամանալից կերպով ներկայացված են հայկական այլախոհության ուժգնացման շրջանում հիմնադրված և գործունեություն ծավալած ընդհատակյա կազմակերպությունները, ինչպես նաև արդեն գործողների զարգացման դինամիկան:

Երրորդ գլխի **առաջին ենթագլխում** ներկայացված է 1968 թ. սկզբին Խորհդրային Հայաստանում գործունեությունն ծավալած «Հանուն Հայրենիքի» ընդհատակյա կազմակերպությունը: Այս կազմակերպության հիմնական նպատակներն էին Հայոց ցեղա-

սպանության ճանաչումը, կորսված հայկական տարածքների՝ Ղարաբաղի և Նախիջևանի մասին բարձրաձայնումը, հայոց լեզվի պահպանմանն ուղղված քայլերը։

Այս կազմակերպության անդամները նախաձեռնում և երկարատև աշխատանքներից հետո տպագրում են 38 էջից կազմված «Հանուն Հայրենիքի» անունը կրող հայրենասիրական ամսագիրը, որը, սակայն, հայ այլախոհները չեն հասցնում տարածել՝ ՊԱԿ-ի կողմից բացահայտվելու և ձերբակալվելու պատճառով։

«Հանուն Հայրենիքի» ընդհատակյա կազմակերպությունը ծանրակշիռ ներդրում է ունեցել Խորհրդային Հայաստանում այլախոհական շարժումների զարգացման մեջ։ «Հանուն Հայրենիքի» անունը կրող ամսագիրը, որը, թեև հայ այլախոհները չկարողացան տարածել հայ ժողովրդի մեջ, այնուամենայնիվ, ներկայումս այդ ամսագիրը արժեքավոր սկզբնաղբյուր է, որի ուսումնասիրումը հնարավորություն է տալիս պատկերացումներ կազմել «Հանուն Հայրենիքի» ընդհատակյա կազմակերպության գաղափարախոսության և գործունեության վերաբերյալ։

Երկրորդ ենթագլխում ներկայացված է 1969-1971 թթ. հայ այլախոհական միջավայրում գործունեություն ծավալած «Հայաստանի վերամիավորման միությունը» ընդհատակյա կազմակերպությունը։ Այս կազմակերպությունը նույնպես կրում էր ժամանակաշրջանի ոգուն համապատասխան տարբեր՝ առաջնային տեղ հատկացնելով Հայոց ցեղասպանության մասին բարձրաձայնման կարևորությանը և Հայաստանի կորցված տարածքների՝ Նախիջևանի և Ղարաբաղի՝ Հայաստանին վերամիավորմանը, ինչն էլ արտահայտիչ կերպով արտացոլվում է նաև կազմակերպության անվան մեջ։ Իհարկե, անհրաժեշտ է ընդգծել, որ ՀՎՄ-ի մեջ նկատվում են նաև անկախական գաղափարների որոշ նրբերանգներ, սակայն հիմնական նպատակն էր շարունակում մնալ Նախիջևանի և Ղարաբաղի միացումը Խորհրդային Հայաստանին։ «Հայաստանի Վերամիավորման միություն» ընդհատակյա կազմակերպությունը նպաստել է հասարակական շրջանակներում ազգային հարցերի մասին քննարկումներին, այդ խնդիրների բարձրաձայնմանը։

Երրորդ ենթագլխում ներկայացված է 1977-1982 թթ.ընթացքում այլախոհական-իրավապաշտպանական գործունեություն ծավալած «Հայաստանի Հելսինկյան խումբ» ընդհատակյա կազմակերպությունը։ 1975 թ. օգոստոսի 1-ին Ֆինլանդիայում ստորագրվում է «Հելսինկյան եզրափակիչ ակտը»՝ երկրների միջև անվտանգության և համագործակցության առանցքային դիվանագիտական փաստաթղթերից մեկը։ ԽՍՀՄ-ը նույնպես ստորագրում է եզրափակիչ ակտը և ստանձնում մի շարք պարտավորություններ։ Ըստ այդմ՝ Խորհրդային Միությունը պարտավորվում էր հարգել մարդու իրավունքները, քաղաքական, քաղաքացիական, տնտեսական, սոցիալական, մշակութային ազատությունները։

Խորհրդային Միության՝ Հելսինկյան համաձայնագրին միանալուց հետո երկրի ներսում կրկին ակտիվանում են այլախոհական տրամադրություններ՝ նոր թափ հաղորդելով այլա-խոհական շարժումներին։ Հիմնվելով ԽՍՀՄ-ի ստորագրած համաձայնագրի բովանդակության վրա՝ մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության համատեքստում, 1976-1977 թթ. Խորհրդային Ուկրաինայում, Լիտվայում, Վրաստանում և Հայաստանում հիմնադրվում են Հելսինկյան խմբեր։

Խորհրդային Միության տարբեր հանրապետություններում 1976 թ. ձևավորված Հելսինկյան խմբերը դաժան բռնաճնշումների և հալածանքների էին ենթարկվում ՊԱԿ-ի կողմից։ Խմբերում ներգրավված իրավապաշտպանները դատապարտվում էին երկարատև ազատազրկումների և աքսորների։ 1981 թ. արդեն դատապարտված էին ուկրաինական,

վրացական, լիտվական, հայկական Հելսինկյան խմբերի ակտիվ անդամները։ Իսկ 1982 թ. Մոսկվայի իրավապաշտպանները, չկարողնալով դիմադրել ճնշումներին, հայտարարեցին Մոսկվայի Հելսինկյան խմբի դադարեցման մասին։

1982 թ. նոյեմբերի 2-10 ընկած ժամանակահատվածը ծանր էր հայկական Հելսինկյան խմբի անդամների և նրանց հետ փոխկապակցված որոշ այլախոհների համար։ Նշված օրերի ընթացքում ՊԱԿ-ը ձերբակալում է «Հայաստանի Հելսինկյան խմբի» անունից հանդես եկող մարդկանց։ Այս ձերբակալություններից հետո ԽՍՀՄ տարածքում դադարել է գոյություն ունենալ վերջին Հելսինկյան խումբը։

«Հայաստանի Հելսինկյան խմբի» հիմնադրմամբ սահմանվեց Խորհդրային Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանության համար մղվող պայքարը։ Այս կազմակերպության գոյությունը առանձնակի ուշադրություն սևեռեց Խորհրդային Հայաստանում ընթացող այլախոհական պայքարի նկատմամբ։ Ինչպես արդեն նշել ենք, իրավապաշտպանական նման խմբեր կային Խորհրդային Միության միայն հինգ հանրապետություններում, և օբյեկտիվորեն է այն պնդումը, որ այս կազմակերպությունը բարձրացրել է Խորհրդային Հայաստանում ծավալված այլախոհության դերն ու նշանակությունը։ Հայկական Հելսինկյան խումբը Խորհրդային Հայաստանը մաս դարձրեց ԽՍՀՄ-ի դեմ մղվող պայքարի միջազգային շարժմանը։

Չորրորդ ենթագլխում ներկայացված է 1978-1980 թթ. գործունեություն ծավալած «Հայ երիտասարդների միություն» ընդհատակյա կազմակերպությունը, որը, ըստ էության, վերջին կանոնակարգված այլախոհական կառույցն էր Խորհրդային Հայաստանում։ ՀԵՄ-ն ուներ ծրագիր, կանոնադրություն, երդման տեքստ։ Կազմակերպության հիմնական նպատակն է եղել անջատել Խորհրդային Հայաստանը ԽՍՀՄ-ից, վերամիավորել Հայաստանից բռնազավթված և Թուրքիային փոխանցված հայկական տարածքները և վերականգնել Հայաստանի անկախությունը։ Ըստ նախատեսված ծրագրի՝ Կոմունիստական կուսակցությունը պետք է երկրում հռչակվեր օրենքից դուրս։ Ընդհատակյա այս կազմակերպությունն ուներ խիստ հակախորհրդային կեցվածք, որը խստագույն կերպով է պատժվում խորհրդային իշխանությունների կողմից։

Ատենախոսության չորրորդ գլուխը՝ **Քաղաքական այլախոհության անհատական դրսևորումները Խորհրդային Հայաստանում 1960-1980-ական թթ. (մինչև Գորբաչովյան «Վերակառուցման» քաղաքականությունը),** բաղկացած է երկու ենթագլխից։

Չորրորդ գլխի **առաջին ենթագլխում** ներկայացված են 1960-80-ական թթ. այլախոհական գործունեությամբ աչքի ընկած անհատները, որոնք կա՛մ միայնակ, կա՛մ մի քանի հոգով՝ առանց կազմակերպության հանգամանք առնելու այլախոհաբար գործել էին ազգային այս կամ այն հարցի համար։

Անժխտելի է այն հանգամանքը, որ հայկական միջավայրում քաղաքական այլախոհության ազդեցիկ դրսևորումներն ունեցել են կազմակերպված բնույթ։ Այդուհանդերձ, այլախոհության անհատական դրսևորումներն ամբողջացրել են Խորհրդային Հայաստանում ծավալած քաղաքական պայքարը։ Անհատների կողմից կատարված քայլերը, ունեցել են իրենց ազդեցիկ դերն ու նշանակությունը ժամանակաշրջանի ոգուն բնորոշ գաղափարական առաջնահերթությունների ձևավորման ընթացքում։

Վերջին գլխի **երկրորդ ենթագլուխը** նվիրված է, այսպես կոչված, «Մետրոյի գործին»։ 1977 թ. հունվարին Մոսկվայի մետրոյում տեղի ունեցած ցայսօր առեղծվածային պայթյունը

ԽՍՀՄ ՊԱԿ-ը կապեց երեք հայ երիտասարդի հետ, ինչը ծանր հետևանքներ ունեցավ հայ այլախոհների և, ընդհանրապես, այլախոհության ընթացքի վրա։ Խորհրդային Հայաստանում այլախոհական շարժումների ուսումնասիրման շրջանակում չկարողացանք որոշ անդրադարձեր չկատարել 1977-1978 թթ. ընթացքում տեղի ունեցած իրադարձություններին։ Այս գործի հետաքննությունն ու դատավարությունն անցել է խիստ գաղտնիության պայմաններում, որն ավելի է ամրապնդում այն համոզմունքը, որ մետրոյի պայթյունը ՊԱԿ-ն օգտագործել է հայ այլախոհների դեմ։ Մետրոյի պայթյունի մասին խորհրդային հայտնի այլախոհ, իրավապաշտպան, ակադեմիկոս Յ. Օռլովը նշել է, որ ՊԱԿ-ը որոշել է այդ պայթյունն օգտագործել Խորհրդային Հայաստանի Ազգային միացյալ կուսակցության դեմ։

Ատենախոսության «Եզրակացություններ» բաժնում ի մի են բերվել հետազոտության հիմնական արդյունքները, և ներկայացվել են եզրահանգումները։ Ամփոփելով ատենախոսության արդյունքները՝ հանգել ենք հետևյալին.

1. Թեև հակախորհրդային և հակակոմունիստական դրսևորումները սկսվել են 1917 թ. հոկտեմբերյան հեղաշրջման օրվանից, սակայն դասական իմաստով այլախոհական շարժումները սկիզբ առան Ն. Խրուշչովի լիակատար իշխանության անցնելուց հետո, երբ Խորհրդային Միությունում տեղի ունեցան հասարակական-քաղաքական խորքային տեղաշարժեր, առաջ բերելով «Հալոցքի քաղաքականության» ժամանակաշրջանը։ Մյուս կողմից՝ 1960-ական թվականներից ավելի սաստկացած Սառը պատերազմը մեծ ազդեցություն ունեցավ խորհրդային հասարակական գիտակցության վրա՝ անդառնալի ճաքեր առաջացնելով խորհրդային համակարգի և կոմունիստական գաղափարախոսության հիմքերում, ինչն է՛լ ավելի նպաստեց և պարարտ հող ստեղծեց այլախոհության առաջացման համար։
2. Այլախոհությունն ամբողջատիրական, միակուսակցական խորհրդային համակարգում նշանակում էր գաղափարական հակադրում, այլընտրանքային աշխարհընկալում և մտածելակերպ, որ բերեցին հատկապես Ռուսաստանի, Ուկրաինայի, Մերձբալթիկայի, Վրաստանի և Հայաստանի առաջավոր մտքի տեր և քաղաքացիական արիություն ունեցող անհատականությունները։
3. ԽՍՀՄ տարբեր հանրապետություններում այլախոհությունը հիմնված է եղել տարբեր նախադրյալների վրա և ունեցել է մի շարք առանձնահատկություններ, սակայն նույնական են եղել ամբողջատիրության և միակուսակցության մերժումը, ժողովրդավարության, մարդու և խոսքի ազատության մղումները։ «Խրուշչովյան հալոցքի» քաղաքականությունը Խորհրդային Հայաստանում եղել է հնարավորությունների միջավայր, սակայն հայաստանյան այլախոհական մտքի ձևավորման համար առաջնային շարժիչի դեր է կատարել հայ ժողովրդի պատմական դառը անցյալի հիշողությունը, Հետպատերազմյան աշխարհակարգի նոր դասավորությունը և հատկապես Թուրքիայի՝ ՆԱՏՕ-ի անդամ դառնալը։ Խմբագրումներ օրինաչափորեն կայսրությանը նոր մոտեցումներ են թելադրել ԽՍՀՄ-Թուրքիա հարաբերությունների տրամաբանության մեջ, որի համար նորովի գործիք է նկատվել հայկական գործոնը։ Եվ քանի որ հայ ժողովրդի պատմական մոտ անցյալը կապված էր Թուրքիայի հետ, ուր տեղի էր ունեցել Հայոց ցեղասպանությունն ու հայրենազրկումը, ուստի Թուրքիայի նկատմամբ Խորհրդային Միության քաղաքականության փոփոխությունը էական ազդեցություն

պետք է ունենար հայ հայրենասիրական միջավայրում և հնարավորությունների նոր հույսեր արթնացներ։ Մյուս կողմից՝ հայ ժողովրդի պատմական դառը անցյալի և խեղդուկ ներկայի կերտման մեջ մեծ մասնաբաժին է ունեցել նաև Ռուսաստանը՝ մանավանդ 1921 թ. Մոսկվայում կնքված ռուս-թուրքական «Բարեկամության և եղբայրության մասին» պայմանագրով, որը, ըստ էության, Հայաստանի Հանրապետության անկախության վերացման և տարածքների մասնատման վերջնական իրավական «հիմքն» էր՝ «վավերացված» Կարսի պայմանագրով։ Այն բնականաբար ազդեցություն ունեցավ 1960-ական թթ. ծավալվող հայ հայրենասիրական շրջանակների քաղաքական պատկերացումների վրա և էապես ազդեց հայկական այլախոհական մտքի ձևավորման և հետագա պայքարի գաղափարական ուղղվածության վրա՝ դառնալով Խորհրդային Հայաստանում քաղաքական այլախոհության ձևավորման հաջորդ խթանը։

4. 1960-1980-ական թվականների հայկական քաղաքական այլախոհությունն ունեցել է հետևյալ հիմնական գաղափարական հիմքերը՝ ա) հողային պահանջատիրությունը, բ) անիրավվող հայոց լեզվի պաշտպանությունը, գ) Օսմանյան կայսրության իրականացրած ցեղասպանության մասին բարձրաձայնումը և դատապարտումը, դ) Հայաստանի անկախ պետականության վերականգնումը, ե) մարդու իրավունքների պաշտպանությունը։ Հենց այս հարցերի շուրջ ձևավորվեց հայկական քաղաքական այլախոհությունը, որը, ունենալով գաղափարական հասունացման տարբեր փուլեր և մակարդակներ, շարունակվեց մինչև ԽՍՀՄ փլուզումը։
5. Վերոնշյալ գաղափարական ուղղությունների հիման վրա ձևավորվել են մի շարք ընդհատակյա կազմակերպություններ, որոնք ունեցել են անվանում, ծրագիր, կանոնադրություն և իրենց առջև դրված նպատակներ ու խնդիրներ։ Հատկապես ընդգծելի է ամբողջ ԽՍՀՄ-ում միակ կազմակերպության՝ գործունեությունը, որը 1966թ. իրեն կուսակցություն հռչակեց գրեթե կեսդարյա միակուսակցական կայսրությունում. Ազգային միացյալ կուսակցությունը, Խորհրդային Հայաստանում եղավ միակ ազգային-այլախոհական կազմակերպությունը, որը տվեց ամենից մեծաքանակ քաղկալանավորներ, ու չնայած ԽՍՀՄ ՊԱԿ-ի կողմից իրականացվող անզիջում հալածանքներին և դաժան ճնշումներին, համառորեն շարունակեց իր գոյությունն ու գործունեությունը՝ ընդհուպ մինչև ԽՍՀՄ փլուզումը։
6. Խորհրդային Հայաստանում ընդհատակյա գործունեություն ծավալեցին և դատապարտվեցին նաև ոչ սակավ թվով այլախոհ անհատներ, որոնք ներգրավված չէին ընդհատակյա այլախոհական կազմակերպություններում և իրենց գաղափարական համոզմունքների համար պայքարը տանում էին միայնակ կամ համախոհների նեղ շրջանակով։
7. Այլախոհությունը, ինչպես ամբողջ ԽՍՀՄ-ում, այնպես էլ Խորհրդային Հայաստանում նշանավորվեց հաղթանակով՝ ԽՍՀՄ փլուզմամբ և անկախությունների հռչակմամբ։ Այլախոհական շարժումն իր ծանրակշիռ դերն ու բաժինն ունեցավ կայսրության փլուզման գործում։
8. Արդի ժամանակաշրջանում կարևորագույն խնդիր է ճշմարիտ լույսի ներքո և գիտական հիմնավորվածությամբ ներկայացնել ոչ վաղ անցյալում ծավալված իրադարձությունների պատմությունը և, մանավանդ, արդյունքը, որ եղավ ազատության, պետականության վերականգնման ու սեփական ճակատագրի տերը

դառնալու իրավունքը վաստակելու տեսքով։ Դա հնարավորություն կտա գաղափարական ամուր հիմքերի վրա դնել Հայաստանի Հանրապետության ապագան, և անկախության, ազատության, արժանապատվության իդեալներով դաստիեարակել սերունդներին։

Ատենախոսության հիմնական դրույթները հրապարակված են հեղինակի հետևյալ գիտական հոդվածներում՝

1. Հարությունյան Շ., Այլախոհական շարժման առաջացման նախադրյալները Խորհրդային Հայաստանում 1950-60-ական թթ., «Գիտական Արցախ», № 4 (19), 2023, էջ 43-53։
2. Հարությունյան Շ., Մոսկվայի 1921թ. մարտի 16-ի պայմանագիրը որպես Հայաստանում այլախոհության ձևավորման խթան և երկրի մասնատման իրավական «հիմք», «Հայկական Քաղաքագիտական Հանդես», № 2 (20), 2023, էջ 33-48։
3. Հարությունյան Շ., Այլախոհության գաղափարական ուղղվածությունները Խորհրդային Հայաստանում 1960-80-ական թթ.-ին, «Գիտական տեղեկագիր», № 1 (46), 2024, էջ 67-78։
4. Հարությունյան Շ., Այլախոհական առաջին կազմակերպությունների առաջացումը և գաղափարական զարգացման դինամիկան Խորհրդային Հայաստանում 1960-ականների սկզբին, «Պատմություն և մշակույթ», № 21 (1), 2024, էջ 137-150։
5. Հարությունյան Շ., Այլախոհական շարժումների ուժգնացման երկրորդ շրջանը Խորհրդային Հայաստանում (1968-1978 թթ.), «Լրաբեր հասարակական գիտությունների», № 1 (670), 2024, էջ 95-105։
6. Հարությունյան Շ., «Խրուշչովյան հալոցքը» և այլախոհության առաջացումը ԽՍՀՄ-ում 1950-60-ական թթ., «Регион и мир», № 4 (53), 2024, էջ 71-75։
7. Հարությունյան Շ., Ազգային միացյալ կուսակցության հիմնադրումը և նրա դերն ու նշանակությունը Խորհրդային Հայաստանում 1960-80-ական թթ. ընթացող այլախոհական շարժման ընթացքում, «Գիտական Արցախ», № 1 (20), 2024, էջ 34-50։
8. Հարությունյան Շ., «Հայ երիտասարդների միություն» ընդհատակյա կազմակերպությունը (1978-1980թթ.), «Հայագիտական հանդես», № 3-4 (66-67), 2024, էջ 99-112։
9. Հարությունյան Շ., «Հանուն հայրենիքի» ընդհատակյա կազմակերպությունը, «Գիտական տեղեկագիր», № 2 (47), 2024, էջ 19-31։

АРУТЮНЯН ШАГЕН ШАНТОВИЧ

ПОЛИТИЧЕСКОЕ ДИССИДЕНТСТВО В СОВЕТСКОЙ АРМЕНИИ В ПЕРИОД С 1960-х ДО СЕРЕДИНЫ 1980-х ГОДОВ

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.01 “История Армении”

Защита состоится 24-го июня 2025 года в 14:00 часов на заседании специализированного совета по История Армении 004 КВОН РА при Институте истории НАН РА (адрес: 0019, Республика Армения, г. Ереван, пр. Маршала Баграмяна, 24/4).

РЕЗЮМЕ

Диссидентство, укоренившееся в результате ‘Хрущёвской оттепели’ и продолжающейся Холодной войны между Западом и Советским Союзом, сыграло значительную роль в подрыве идеологических основ советского режима. Оно оказало глубокое воздействие на общественно-политическую жизнь СССР, оставив неизгладимый след в сознании народов Советского Союза. У советского гражданина всё более укреплялось недоверие к советскому государству и его коммунистической идеологии, что в перспективе стало одним из факторов, способствовавших распаду советской империи.

Предметом настоящего исследования является политическое инакомыслие, возникшее в Советской Армении в 1960–1980-х годах, которое, будучи частью общеимперского интеллектуального движения, имело ярко выраженные национальные особенности.

После распада СССР и восстановления независимости Армении одной из первоочередных задач государства должно было стать проведение комплексных исследований диссидентских движений советского периода. Это способствовало бы построению нового независимого государства на более прочных идеологических основаниях. Научное освещение борьбы за независимость и проявлений инакомыслия, безусловно, оказало бы позитивное влияние на формирование армянской общественно-политической мысли в условиях независимости и нового мирового порядка, а также сыграло бы ключевую роль в формировании ценностной системы воспитания и образования будущих поколений. Среди прочего, одной из **главных целей** настоящей диссертации является восполнение данного научного пробела путём развёртывания соответствующего академического дискурса.

Исходя из предмета и задач диссертационного исследования, предпринимается попытка дать научное объяснение следующим **ключевым вопросам**:

- Исследовать внешне- и внутриполитические, а также идеологические процессы в Советском Союзе в рассматриваемый период, приведшие к возникновению движения диссидентство в СССР;
- Подробно изучить и проанализировать предпосылки возникновения политического диссидентство в Советской Армении, его характерные особенности и идеологические направления;
- Провести всестороннее исследование всех форм проявления политического диссидентство в Советской Армении и классифицировать их;

- Выявить, систематизировать и представить деятельность, идеологические приоритеты и цели организаций и отдельных лиц, связанных с движением диссидентство в Советской Армении;
- Определить степень влияния и роль диссидентского движения в Советской Армении в процессе восстановления государственной независимости;
- Способствовать общественному осмыслению одного из важнейших исторических процессов новейшего времени — борьбы за восстановление независимости.

Основное научное новшество данной диссертации заключается в комплексном исследовании периода политического диссидентство в Советской Армении с опорой на зарубежные и армянские источники, а также государственные и личные архивные материалы. В работе систематизирован процесс возникновения политического диссидентство в Советской Армении с учётом всех предпосылок, факторов и особенностей, а также проанализированы их взаимосвязи. В диссертации также проводится систематизация трёх основных идеологических направлений армянского инакомыслия, отражённых на протяжении всего периода развития инакомысленного движения. К числу научных новаций исследования относятся: **а)** Структурированный анализ и изложение истории подпольных организаций, возникших в Советской Армении, **б)** Классификация процессов формирования армянских подпольных диссидентских организаций, их деятельности, идеологических приоритетов, методов борьбы и судебных процессов, **в)** Исследование и введение в научный и общественный оборот индивидуальных проявлений диссидентство.

Первая глава диссертации под названием **“Идеологические основания, предпосылки, особенности и направления формирования политического диссидентство”** состоит из трёх подразделов, которые, в свою очередь, логически делятся на отдельные части. В данной главе рассматриваются общественно-политические настроения в СССР в 1950–1960-х годах, а также политика ‘Хрущёвской оттепели’, ставшая основой для возникновения советского диссидентство. Кроме того, анализируются особенности и разновидности диссидентство в Армении, истоки которых прослеживаются до сути русско-турецкого договора 1921 года.

Вторая глава - **“Первые проявления политического диссидентство, возникновение первых организаций и динамика идеологического развития в Советской Армении в начале 1960-х годов”**, состоящая из четырёх подразделов, посвящена подпольным организациям, действовавшим в период становления движения диссидентство в Советской Армении.

Третья глава - **“Вторая фаза активизации диссидентских движений в Советской Армении: 1968–1978 годы, создание подпольных организаций и их деятельность”**, также состоящая из четырёх подразделов, подробно представляет организации, основанные и действовавшие в период усиления армянского диссидентство, а также динамику развития уже существовавших структур.

Четвёртая глава – **“Индивидуальные проявления политического диссидентство в Советской Армении (1960–1980-е годы, до начала политики “перестройки” Горбачёва)”** — состоит из двух подразделов и посвящена отдельным личностям, проявившим себя в диссидентской деятельности в указанный период. Эти люди — индивидуально или в малых группах — выступали против советского режима по различным национальным вопросам, не входя при этом в состав каких-либо организаций. Второй подраздел завершающей главы посвящён так называемому ‘делу метро’: в январе 1977 года загадочный взрыв в Московском метрополитене был связан КГБ с тремя армянскими молодыми людьми, что имело серьёзные последствия как для армянских диссидентов, так и для общего хода диссидентского движения.

В заключительной части диссертации представлены итоговые выводы, вытекающие из рассмотренных и проанализированных в исследовании проблем и поставленных целей.

SHAHEN SHANT HARUTYUNYAN

POLITICAL DISSENT IN SOVIET ARMENIA FROM THE 1960s TO THE MID-1980s

Dissertation for the degree of Doctor of History on the specialization of "History of Armenia" 07.00.01.

The Defense of the Disseration will be held on June 24, 2025, at 14^{00} at the Session of the Specialized Council 004 on Armenian History of HESC RA by the Institute of History of the National Academy of Sciences of RA (0019, Yerevan, Marshal Baghramyan ave., 24/4).

ABSTRACT

The dissent that took root as a result of the "Khrushchev Thaw" and the ongoing Cold War between the West and the Soviet Union significantly contributed to the erosion of the ideological foundations of the Soviet regime. It had a profound impact on the socio-political life of the USSR, leaving a lasting imprint on the consciousness of the Soviet peoples. The Soviet citizen increasingly lost faith in the Soviet state and its communist ideology—an erosion of trust that, over time, became one of the contributing factors to the eventual collapse of the Soviet empire.

The subject of the study is the political dissent that emerged in Soviet Armenia between the 1960s and 1980s, which, while largely a nationwide intellectual movement, exhibited distinct national characteristics.

Following the collapse of the USSR and the restoration of Armenia's independence, one of the state's primary tasks should have been the commissioning of comprehensive studies on the dissent movements of the Soviet era. This would have contributed to building a new independent state on ideologically stronger foundations. The scientific illumination and presentation of the struggle for independence and the manifestations of dissent would undoubtedly have a positive impact on the emerging Armenian socio-political thought in the conditions of independence and a new world order, as well as play a key role in the value system for the upbringing and education of future generations. Among other things, **the main goal** of this dissertation is to fill this gap by developing scientific discourse around the topic.

Based on the subject and objectives of the dissertation, an attempt is made to provide a scientific solution to the following **key issues**:

- To examine the external and internal political and ideological processes of the Soviet Union during the relevant period, which gave rise to the dissent movements within the USSR,
- To thoroughly study and discuss the preconditions for the emergence of political dissent in Soviet Armenia, its typical characteristics, and ideological directions,
- To conduct a comprehensive study of all manifestations of political dissent in Soviet Armenia and categorize them,
- To uncover, systematize, and outline the activities, ideological priorities, and goals of the dissenting organizations and individuals established in Soviet Armenia,
- To determine the degree of influence and role of the Soviet Armenian dissent movement in the process of statehood restoration,

- To contribute to the public recognition of a key historical event in recent history—the struggle for the restoration of independence.

The primary scientific novelty of this dissertation lies in its comprehensive examination of the period of political dissent in Soviet Armenia, drawing on foreign and Armenian sources, as well as state and personal archival materials. This study consolidates the emergence of political dissent in Soviet Armenia, taking into account all the prerequisites, factors, and peculiarities, and analyzing their interrelated connections. The dissertation also systematizes the three main ideological directions of Armenian dissent, which were reflected throughout the entire period of the dissenting movement. The scientific innovations of this work include: **a)** A structured analysis and presentation of the history of underground organizations established in Soviet Armenia, **b)** The classification of the founding of Armenian underground dissent organizations, their activities, ideological priorities, methods of struggle, and legal processes, **c)** The study and publicizing of the individual manifestations of dissent.

The first chapter of the dissertation, titled **"The Ideological Foundations, Preconditions, Characteristics, and Directions of the Formation of Political Dissent",** consists of three subsections, which are further divided into separate sections according to a logical framework. The first chapter explores the socio-political mood in the USSR during the 1950s and 1960s, as well as the "Khrushchev Thaw" policies, which led to the emergence of Soviet dissent. The chapter also examines the peculiarities and variations of dissent in Armenia, with their roots traced back to the essence of the 1921 Russo-Turkish Treaty.

The second chapter, titled **"The First Manifestations of Political Dissent, the Emergence of the First Organizations, and the Dynamics of Ideological Development in Soviet Armenia in the Early 1960s",** which consists of four subsections, presents the underground organizations that were active during the early stages of dissent movements in Soviet Armenia.

The third chapter, titled **"The Second Phase of Intensification of Dissent Movements in Soviet Armenia: 1968-1978, the Underground Organizations Established During This Period and Their Activities",** which also consists of four subsections, provides a detailed presentation of the underground organizations that were founded and became active during the period of intensification of Armenian dissent. It also examines the dynamics of development of the organizations that were already operating.

The fourth chapter, titled **"Individual Manifestations of Political Dissent in Soviet Armenia (1960-1980s, up to Gorbachev's 'Perestroika' Policies)",** consists of two subsections and presents individuals who stood out for their dissenting activities during the 1960s to 1980s. These individuals, either alone or in small groups, acted in opposition to the Soviet regime on various national issues, without forming any organized group. The second subsection of the final chapter is dedicated to the so-called "Metro Case." In January 1977, a mysterious explosion in the Moscow Metro was linked by the KGB to three Armenian youths, an event that had severe repercussions for Armenian dissenters and, more broadly, for the course of dissent movements.

The concluding section presents the summary conclusions derived from the issues analyzed and the objectives pursued in this study.